Ֆոն Քէօպէնն էլ (von Koeppen), որին գերման ճամբորդ Հաքստուսուզէն անուանում է «լաւագոյն ռուս վիճակագրողը», Շոպէնի «մանրամասն տախտակների» հիման վրայ կազմել է վիճակագրական տուեալներ ու զեկուցել «Գիտութեան Կայսերական Կաճառին», ինչպէս որ վկայում է ժամանակակից մի ուրիշ գերման ճամբորդ, պրոֆեսոր Մորից Վագներ:

Այս երկու գերման ճամբորդներն էլ վերարտադրում են Շոպէն–Քէօպէնի վիճակագրական տուեալները: Մինչ սակայն Վագներ բաւականանում է ժամանակակից Հայաստանի (Անդրկովկասեան) տուեալներով միայն, Հաքստհաուզէն շատ աւելի մանրամասնօրէն առաջ է բերում ո՛չ միայն այդ, այլ եւ ամբողջ Կովկասի հայութեան եւ միւս ազգերին վերաբերեալ թուական տեղեկութիւնները:

Ահա՛ սրանք էլ մեզ ասում են, որ 1838–ին Անդրկովկասի հայութեան թիւը ընդամէնը եղել է 294,606 եւ կամ, կլոր թուով, 295 հազար:

Միւս կողմից ժամանակի իմաստով եւ վարչական բաժանումներով Հայաստան ըմբռնուած հողամասում («Հայկ. Շրջան») (Երեւան, Նախիջեւան, Օրդուբաթ) ապրելիս են եղել, ըստ Վագների, 164,450 հոգի: Գրեթէ նոյն թիւն է յիշատակում նաեւ Հաքստհաուզէն, անշուշտ աւելի կլորցնելով — 164,500: Երկուսի աղբիւրներն էլ, տեսանք, նոյնն են: Բոդենշտէդտ տալիս է 180–200 հազար մօտաւոր թիւը: Աւելի վստահելի են անշուշտ առաջինները:

«Հայկական Շրջանի» բնակչութեան վերոյիշեալ 164–165 հազարից էլ, հայութեա՛ն թիւը եղել է ամբողջութեան հազիւ կէսը: Վագներ հիմնուելով իր աղբիւրների վրայ ասում է՝ «Հայկական Շրջանի» բնակչութիւնը «ըստ կրօնի համարեա երկու հաւասար մասի է բաժանւում. քրիստոնեայ՝ 82,377 հոգի, մահմեդական՝ 81,749 հոգի (եզիտիներ էլ՝ 824 հոգի):

Իսկ քրիստոնեայ տարրը բաղկացած է եղել գրեթէ բացառաբար հայերից:

Այս նոյն տեղեկութիւնն ենք գտնում մենք նաեւ Հաքստհաուզէնից ու Բոդենշտէդտից: Ուրիշ խօսքով՝ 1838–ին Անդրկովկասի ողջ հայութեան 294,500 թուից հազիւ ընդամէնը 82 հազարն են ապրելիս եղել «Հայկական Շրջան»–ում, ասել է՝ 1/4–ից մի փոքր աւելին:

Մի ուրիշ պարագայ եւս:

Հաքստհաուզէնի վկայութեամբ՝ անդրկովկասեան հայութեան 1/3–ից մինչեւ 1/2–ը ընդամէնը 20 տարի սրանից առաջ են Պարսկաստանից եւ Տաճկահայաստանից ներգաղթել» (1828–1829 թ.):

Վագներ, որի աղբիւրները դարձեալ նոյնն են, աւելի որոշ թուեր է առաջ բերում:

«Հայ քրիստոնեաների թիւը («Հայկական Շրջան»–ում) ներգաղթից առաջ կազմում էր 4428 ընտանիք՝ 25,151 շունչով: Պարսկաստանից նոր եկած (1828–1829–ին) ընտանիքների թիւն էր 8036, ընդամէնը՝ 35,500 շունչ: Հայաստանի տաճկական սահմանից նոր եկած ընտանիքների թիւը հաշւում էին 3682, ընդամէնը 21,666 շունչ: Այսպիսով, ուրեմն, յաւելումը եղել է ընդամէնը 57,226 շունչ*), որով աղգաբնակութեան նախկին թիւը եռապատկուած պիտի լինէր, եթէ այնուհետեւ նոր կորուստներ առաջացած չլինէին» (Վագներ նկատի ունի մահմեդական տարրի մասնակի արտագաղթը, որպէս հետեւանք նոր, ռուսական տիրապետութեան):

Վագների եւ կամ, աւելի ճիշդը, իր աղբիւրը հանդիսացող Շոպէն–Քէօպէնի թուական տուեալներին նայելով՝ «Հայկական Շրջանի» ամբողջ աղգաբնակութեան (164,450) մեծագոյն մասը, 122,968 շունչ, ապրելիս է եղել Երեւանի շրջանում, մինչ Նախիջեւանի շրջանը ունեցել է ընդամէնը 30,507 բնակիչ, իսկ Օրդուբաթը աւելի պակաս, 10,975: Ամբողջ աղգաբնակութիւնից էլ 20,377 հոգի են (մէկ ութերորդ) ապրելիս եղել քաղաքներում: Երեւանը այդ ժամանակ ունեցել է 11,463 բնա-

*) Վագներ այստեղ աւելացնում է. «Ֆոնտան (Fontan) Տաճկաստանից եկածների համար շատ աւելի մեծ թիւ է տալիս, քան Շոպէն, այն է 90 հազար շունչ»: Անշուշտ անհիմն: Ըստ երեւոյթին նոյնն է նկատի ունեցել նաեւ Հաքստուսուզէն, որ Անդրկ. հայութեան 1/2–1/3 ներգաղթած է համարում: